

ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

**ԴԵՎՐԻԿՅԱՆ ՇՈԴԱԿԱԹ ՎԱՐԴԱՆԻ**

**ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՊԱՏԿԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ  
ԿԵՐՊԱՐՎԵՍՏՈՒՄ  
(9-20-ՐԴ ԴԱՐԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ)**

ԺԷ.00.03 - «Կերպարվեստ, դեկորատիվ և կիրառական արվեստ, դիզայն»  
մասնագիտությամբ  
արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճանի  
հայցման ատենախոսության

**ԱՆՂՄԱԳԻՐ**

ԵՐԵՎԱՆ – 2026

---

ИНСТИТУТ ИСКУССТВ

**ДЕВРИКЯН ШОГАКАТ ВАРДАНОВНА**

**ОБРАЗ СВЯТОГО ГРИГОРИЯ ПРОСВЕТИТЕЛЯ В АРМЯНСКОМ И  
ЕВРОПЕЙСКОМ ИСКУССТВЕ (В КОНТЕКСТЕ IX–XX ВЕКОВ)**

**АВТОРЕФЕРАТ**

диссертации на соискание ученой степени  
кандидата искусствоведения по специальности

17.00.03 – “Изобразительное искусство, декоративное и прикладное искусство,  
дизайн”

ЕРЕВАН – 2026

Ատենախոսության թեման հաստատվել է Արվեստի ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝

արվեստագիտության թեկնածու, դոցենտ  
**ՄԱՆՈՒԿՅԱՆ Սեյրանուշ Սոսի**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր  
**ՀԱՎՈՐՅԱՆ Հրավարդ Հրաչյայի**  
արվեստագիտության թեկնածու, դոցենտ  
**ԱՎԵՏԻՍՅԱՆ Քնարիկ Գառնիկի**

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի պետական համալսարան


Պաշտպանությունը կայանալու է 2026թ. հուլիսի 24-ին, ժամը՝ 14.00-ին, Արվեստի ինստիտուտում գործող ՀՀ ԿԳՄՄՆ ԲԿԳԿ-ի 016 Արվեստագիտության մասնագիտական խորհրդի նիստում (հասցեն՝ Երևան, 0019, Մարշալ Բաղրամյան պողոտա 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Արվեստի ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2026թ. հունիսի 24-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,

արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր՝



**Ասատրյան Ա. Գ.**

---

Тема диссертации утверждена в Институте искусств.

Научный руководитель –

кандидат искусствоведения, доцент  
**МАНУКЯН Сейрануш Сосовна**

Официальные оппоненты –

доктор искусствоведения, профессор  
**АКОПЯН Гравард Грачьевич**  
кандидат искусствоведения, доцент  
**АВETИՏԻՅԱՆ Կնարիկ Գարնիկովնա**

Ведущая организация –

Ереванский государственный университет

Защита диссертации состоится 24-го июля 2026г. в 14.00 часов на заседании специализированного совета 016 Искусствоведение КВОН МОНКС РА, действующего в Институте искусств (адрес: Ереван, 0019, проспект Маршала Баграмяна 24/4).

С диссертацией можно ознакомиться в библиотеке Института искусств НАН РА.

Автореферат разослан 24-го июня 2026г.

Ученый секретарь специализированного совета,

доктор искусствоведения, профессор



**Ասատրյան Ա. Գ.**

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսությունը նվիրված է Հայոց առաջին հայրապետ, Հայոց եկեղեցու միակ համաքրիստոնեական սուրբ Գրիգոր Լուսավորչի կերպարի պատկերագրական և գեղարվեստական դրսևորումների ուսումնասիրությանը:

### **Թեմայի արդիականությունը:**

Թեմայի արդիականությունը պայմանավորված է նախ և առաջ այն հանգամանքով, որ Գրիգոր Լուսավորչի կերպարի արվեստաբանական ամբողջական, համակարգված և ժամանակագրական լայն ընդգրկումով հետազոտություն առ այսօր գրեթե չի իրականացվել: Ատենախոսությունում առաջին անգամ փորձ է արվում մեկ միասնական ուսումնասիրության շրջանակում դիտարկել 9-20-րդ դարերի հայկական, բյուզանդական, ռուսական, արևելատեղրոպական և արևմտատեղրոպական արվեստում ձևավորված պատկերատիպերը, դրանց փոխազդեցությունները և զարգացման հիմնական փուլերը: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս առավել ամբողջական կերպով ներկայացնելու Սուրբ Գրիգոր Լուսավորչի կերպարի պատմական, գաղափարական և գեղարվեստական նշանակությունը համաշխարհային քրիստոնեական մշակույթի համատեքստում:

Թեման արդիական է նաև այն պատճառով, որ Գրիգոր Լուսավորչի կերպարի պատկերային պատմությունը հնարավորություն է տալիս նորովի դիտարկել հայ արվեստի և եվրոպական արվեստի փոխհարաբերությունները: Հաճախ է շեշտադրվում եվրոպական արվեստի ազդեցությունը հայկական մշակույթի և գեղարվեստական մտածողության ձևավորման վրա: Սակայն Սուրբ Գրիգոր Լուսավորչի կերպարի ուսումնասիրությունը հանդես է գալիս որպես առավել խոսուն և նշանակալի օրինակներից մեկը՝ դիտարկելու համար նաև հակադարձ գործընթացը՝ հայկական թեմայի և հոգևոր մշակութային ավանդույթի ազդեցությունը եվրոպական արվեստի և պատկերագրական համակարգերի վրա:

### **Աշխատանքի նպատակն ու խնդիրները:**

Ատենախոսության գլխավոր նպատակն է Սուրբ Գրիգոր Լուսավորչի կերպարը դիտարկել ոչ թե մեկ առանձին միջավայրի կամ արվեստի տեսակի շրջանակում, այլ որպես պատկերագրական երկարատև զարգացում ունեցող կերպար, որի տարբեր փուլերն ու դրսևորումները փոխկապակցված են պատմական, դավանաբանական, քաղաքական և գեղարվեստական իրողություններով: Առանձնակի ուշադրություն է դարձվել հատկապես եվրոպայում ստեղծված, այնպիսի օրինակների հայտնաբերմանն ու ուսումնասիրությանը, որոնց մինչ այժմ քիչ են անդրադարձել կամ, որոնք ընդհանրապես դուրս են մնացել հետազոտական ուշադրությունից: Սա հնարավորություն է տվել առավել ամբողջական կերպով ներկայացնելու Սուրբ Գրիգոր Լուսավորչի պատկերագրության զարգացման ընթացքը, տարածման աշխարհագրությունը և գեղարվեստական բազմազանությունը:

Ատենախոսության խնդիրներն են՝

- Փնտրել, հավաքագրել և գիտական շրջանառության մեջ ներմուծել Գրիգոր

Լուսավորչին պատկերող հնարավորինս մեծ թվով և բազմազան արվեստի գործեր՝ աշխարհագրական, մշակութային և դավանական տարբեր միջավայրերից:

- Ուսումնասիրել հավաքագրված նյութը, հնարավորության սահմանում ճշտել ստեղծագործությունների թվագրությունը, հեղինակներին, ստեղծման վայրերն ու պատմամշակութային միջավայրը, քանի որ այդ հուշարձանների զգալի մասը պահպանվել է առանց թվականների և հեղինակային հիշատակումների:

- Համակարգված կերպով ուսումնասիրել և համադրել թեմային առնչվող հայկական և հատկապես օտարալեզու մասնագիտական գրականությունը՝ այն ներառելով մեկ ամբողջական գիտական քննության շրջանակում:

- Բացահայտել Սուրբ Գրիգոր Լուսավորչի պատկերագրության բազմաշերտ բնույթը, դրա ձևավորման պատմական, դավանաբանական և գեղարվեստական հիմքերը, ինչպես նաև տարբեր ժամանակաշրջաններում ի հայտ եկած պատկերագրական փոփոխություններն ու զարգացումները:

- Մատնանշել տարբեր տարածաշրջաններում ձևավորված պատկերների տեղային և ոճական առանձնահատկությունները՝ միաժամանակ դիտարկելով դրանց կապը ընդհանուր պատկերագրական նախատիպերի և համաքրիստոնեական գեղարվեստական ավանդույթի հետ:

- Վեր հանել հայկական և եվրոպական արվեստների փոխազդեցությունները Սուրբ Գրիգոր Լուսավորչի պատկերագրության շրջանակում և ցույց տալ այդ կերպարի տարածման ու ընկալման առանձնահատկությունները տարբեր մշակութային միջավայրերում:

### **Թեմայի մշակվածության աստիճանը:**

Սուրբ Գրիգոր Լուսավորչի կերպարի պատկերագրության ուսումնասիրությունը թեև ունի հարուստ պատմություն, սակայն մինչ այժմ կրել է հիմնականում հատվածական բնույթ: Առանձին աշխատություններում ուսումնասիրվել են սրբի բյուզանդական դիմանկարները, հայկական մանրանկարչության որոշ օրինակներ, ուղղափառ և հետբյուզանդական միջավայրում ձևավորված պատկերները, ինչպես նաև հայկական տպագրության և սրբանկարչության առանձին նմուշներ, սակայն դրանք հիմնականում դիտարկվել են մասնավոր խնդիրների շրջանակում և չեն համադրվել որպես մեկ ամբողջական պատկերագրական զարգացում:

Սրբի բյուզանդական պատկերների ուսումնասիրության հիմնարար սկզբնակետը Սիրարփի Տեր-Ներսեսյանի «Գրիգոր Լուսավորչի դիմանկարները բյուզանդական արվեստում»<sup>1</sup> հոդվածն է, որտեղ հեղինակը ներկայացնում է Լուսավորչի կերպարի մուտքը բյուզանդական սրբապատկերային համակարգ, նրա կապը հունական տոնացույցների և Հայսմավուրքների հետ, ինչպես նաև Սուրբ

<sup>1</sup> **Der Nersessian S.**, Les Portraits de Grégoire l'Illuminateur dans l'Art Byzantin, *Byzantion*, tome XXXVI, Fasc. 1, Bruxelles, 1966, p. 386-395; **Տեր-Ներսեսյան Ա.**, Գրիգոր Լուսավորչի դիմանկարները բյուզանդական արվեստում, *Հայ արվեստը միջնադարում*, Երևան, 1975, էջ 64-69:

Սոֆիայի<sup>2</sup> և մի շարք բյուզանդական օրինակների պատկերագրական առանձնահատկությունները<sup>3</sup>:

Ուղղափառ և հետբյուզանդական միջավայրում Լուսավորչի պաշտամունքին ու պատկերներին անդրադարձել են Նիկոս Մուցոպոլոսը<sup>4</sup>, Անդրեյ Գրաբարը<sup>5</sup>, ինչպես նաև բյուզանդական և ռուսական արվեստի այլ ուսումնասիրողներ<sup>6</sup>:

Իտալիայի Նեապոլ քաղաքում գտնվող Գրիգոր Հայի վանական համալիրի պատմության և որմնանկարների ուսումնասիրության առումով առանձնահատուկ կարևորություն ունեն մենաստանի արխիվային փաստաթղթերի ժողովածուն<sup>7</sup> և վանքին նվիրված գիտական աշխատությունը<sup>8</sup>, որոնց շնորհիվ կարողանում ենք իմանալ ոչ միայն պատմական վկայություններ վանական համալիրի մասին, այլև մենաստանի ներքին գործերին վերաբերող մանրամասներ: Օգտվելով առկա գիտական գրականությունից<sup>9</sup> քննության ենք առել նաև Սուրբ Գրիգորի նշխարների՝ Իտալիա

---

<sup>2</sup> **Mango C.**, Materials for the Study of the Mosaics of St. Sophia at Istanbul, Washington D.C., 1962, p. 64; **Salzenberg W.**, Altchristliche Baudenkmäler von Constantinopel vom V. bis XII. Jahrhundert, Berlin, 1854; **Ալիդյան Ն.**, Ս. Գրիգոր Լուսաւորչի խճանկարը Ս. Սոֆիայի եկեղեցուն մեջ, Հանդէս ամսօրեայ, 1932, մայիս-հունիս, էջ 369–370; **Բասմաճյան Կ.**, Գրիգոր Լուսաւորիչը Այա Սոֆիայի մէջ, Ընդարձակ տարեցոյց ազգային հիւանդանոցի, Կ. Պոլիս, 1937; **Հացունի Վ.**, Կենդանագիր Ս. Գրիգոր Լուսաւորչի Ս. Սոֆիայի մէջ, Բազմավէպ, 1941, հմր. 1-12, էջ 13-16; **Ճեվահիրճյան Ս.**, Ս. Գրիգոր Լուսաւորչի կենդանագիր խճանկարը Ս. Սոֆիայի մէջ, Բազմավէպ, 1957, հմր. 11-12, էջ 279-281:

<sup>3</sup> **Adontz N.**, L'âge et l'origine de Basile I-er, dans Byzantion, 8, Bruxelles, 1933, pp. 475–560; 9, Bruxelles, 1934, pp. 223–260. **Moravcsik G.**, Sagen und Legenden über Basileios I, dans Dumbarton Oaks Papers, 15, Washington, D.C., 1961, pp. 61–126.

<sup>4</sup> **Μουτσόπουλος Νίκος Κ.**, Η λατρεία του Αγίου Γρηγορίου της Μεγάλης Αρμενίας στην Ελλάδα, Αθήνα, 2001.

<sup>5</sup> **Grabar A.**, Byzantine Painting, Geneva, 1953; **Grabar A.**, La peinture religieuse en Bulgarie, Paris, 1928.

<sup>6</sup> **Меликсет-Бек Л.**, Древняя Русь и Армения, Сборник трудов института языка им. Н.Марра АН АрмССР, Ереван, № 1, 1946; **Айвазян К.**, История сношения русской и армянской церквей в средние века, Ереван, 1989; **Каковкин А.**, Образ Григория Армянского на некоторых памятниках древнерусского искусства, Պատմա-բանասիրական հանդես, 1976, № 2, էջ 166–172; **Ξυγγοπουλος Α.**, Οι τοιχογραφίες του Αγίου Νικολάου Ορφανού Θεσσαλονίκης, Athens, 1964.

<sup>7</sup> **Spinosa N., Pinto A., Valerio A.**, San Gregorio Armeno Appendice Documentaria - Parte A, Napoli, 2013.

<sup>8</sup> **Spinosa N., Pinto A., Valerio A.**, San Gregorio Armeno: storia, architettura, arte e tradizioni, con fotografie di Luciano Pedicini, Napoli, 2013.

<sup>9</sup> **Valerio A.**, I Luoghi della memoria. Istituti reli giosi femminili a Napoli dal IV al XVI secolo, vol. I, Napoli, Luciano Editore, 2006; **Divenuto F., Araldi G. F.**, Napoli l'Europa e la Compagnia di Gesù nella Cronica di Giovan Francesco Araldo, Napoli, Edizioni scientifiche italiane, 1998; **D'Alloe S.**, Catalogo di

տեղափոխման վերաբերյալ ձևավորված տեսակետները՝ զուգահեռաբար ներկայացնելով նաև հայ հեղինակների անդրադարձներն<sup>10</sup> այդ հարցին և ընդհանուր առմամբ՝ վանական համալիրին և դրա որմնանկարներին<sup>11</sup>:

Թերևս ամենից քիչ ուսումնասիրված և սակավ գիտական անդրադարձ ստացած ստեղծագործությունները մեկէջյա փորագրանկարներն են: Այս պատկերների խորհրդաբանությանը, պատկերագրական առանձնահատկություններին և տպագիր մշակույթում դրանց գործառույթին կարևոր անդրադարձ են պարունակում Վարդան Դևրիկյանի՝ հայկական տպագրության և գրքարվեստի պատմությանը նվիրված աշխատությունները, որտեղ քննվում են նաև Սուրբ Գրիգոր Լուսավորչի վարքագրական ավանդույթն ու տպագիր պատկերների ստեղծման հարցերը<sup>12</sup>:

Ռումինահայ սրբանկարչության վերաբերյալ ուսումնասիրությունները մինչ օրս սակավ են: Թեմայի առավել հիմնարար հետազոտությունները պատկանում են Սեյրանուշ Մանուկյանին, ում աշխատություններում քննվում են ռումինահայ սրբանկարչության պատկերագրական, ոճական և պատմամշակութային առանձնահատկությունները: Հատկապես կարևոր են նրա անդրադարձները Սուրբ Գրիգոր Լուսավորչին պատկերող սրբանկարներին, դրանց պատկերագրական տիպերին և հետբյուզանդական արվեստի հետ ունեցած կապերին<sup>13</sup>:

Գրիգոր Լուսավորչի պատկերագրության անբաժան դրվագներից է հայ-հռոմեական դաշինքի՝ «Դաշանց թղթի» ավանդագրույցը, որի պատմական,

---

tutti gli edifizii sacri della città di Napoli e suoi sobborghi, Archivio storico per le province napoletane, VIII, Napoli, 1883.

<sup>10</sup> **Ազոնց Ս. Գ.**, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, հտ. Գ. Վենետիկ, 1802; **Ավգերյան Մ.**, Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց, հտ Գ., Վենետիկ, 1812, էջ 368-374; **Ուղուրեան Մ.**, Պատմութիւն հայոց գաղթականութեան և շինութեան եկեղեցոյ նոցա ի Լիվոնոյ քաղաքի, Վենետիկ, Տպ. Մխիթ. 1891:

<sup>11</sup> **Rizzo V.**, I cinquantadue affreschi di Luca Giordano a S. Gregorio Armeno: documenti su allievi noti ed ignoti, in *Storia dell'Arte*, 70, 1990, pp. 364-390; **Vargas C.**, Teodoro d'Errico: la maniera fiamminga nel Viceregno, Napoli, 1988; *La chiesa di San Gregorio Armeno a Napoli*, Yerevan, 2011.

<sup>12</sup> **Դևրիկյան Վ.**, Հայ գիրքը աշխարհի խաչմերուկներում. Մասն Ա՝ Վենետիկից Հռոմ (16-րդ դար) (2012), Մասն Բ՝ Լվովից Ամստերդամ (17-րդ դար) (2014), Մասն Գ՝ Սուրբ Ղազարից Սուրբ Էջմիածին (18-րդ դար) (2016) Երևան; **Դևրիկյան Վ., Դևրիկյան Շ.**, Սուրբ Էջմիածնի տպարանի հիմնումը և գործունեությունը 18-րդ դարում, Ս. Էջմիածին, 2022:

<sup>13</sup> **Մանուկյան Ս.**, Սրբանկարները ռումինահայոց մեջ, Ակադեմիկոս Լ. Հախվերդյանի ծննդյան 90-ամյակին նվիրված գիտական նստաշրջանի նյութեր, Երևան, 2015, էջ 33-45; **Manukyan S.**, The Romanian-Armenians Art of Icon Painting, in *Armenian Treasures in Romania*, Bucharest, 2020, pp. 98-104; **Manoukyan S.**, L'Art des Icones des Arméniens de la Roumanie, *Revue des Etudes Sud Est Europeennes*, LVIII, 1-4, Bucarest, 2020, pp. 165-189.

եկեղեցական և աստվածաբանական կողմերին վերաբերող կան հիմնավոր ուսումնասիրություններ<sup>14</sup>:

Սույն աշխատանքը թեմայի ուսումնասիրության առկա բացերը լրացնելու փորձ է՝ միավորելով թեմայի վերաբերյալ առկա գիտելիքն ու նորահայտ նյութերը և նպատակ ունենալով ամբողջական պատկերացում ստեղծել Սուրբ Գրիգոր Լուսավորչի կերպարի պատկերագրական զարգացման մասին:

### **Աշխատության գիտական նորոյթը:**

Ատենախոսության էջերում Սուրբ Գրիգոր Լուսավորչի պատկերագրությունն առաջին անգամ ուսումնասիրվում է որպես բազմադարյա և բազմամշակութային միասնական համակարգ, համադրաբար քննության են ենթարկվում բյուզանդական, հայկական և եվրոպական արվեստի մեծաքանակ նյութեր: Գիտական շրջանառության մեջ են դրվել նախկինում չուսումնասիրված կամ քիչ հայտնի արվեստի գործեր, մասնավորապես՝ մեկէջյա փորագրանկարներ, վերարժևորվել է Նեապոլի Գրիգոր Հայի համալիրի դերը Լուսավորչի եվրոպական պաշտամունքի և պատկերագրության ձևավորման մեջ, ինչպես նաև նորովի մեկնաբանվել են էջմիածնի տպարանի, Վենետիկի և Վիեննայի Մխիթարյան միաբանությունների և արևելաեվրոպական հայ արվեստի փոխառնչությունները: Աշխատանքում բացահայտվել են Լուսավորչի կերպարի պատկերագրական զարգացման, գաղափարական վերափոխման և տարբեր մշակութային միջավայրերում դրա տեղային ձևափոխումների հիմնական օրինաչափությունները:

**Ուսումնասիրության աղբյուրները:** Ատենախոսության հիմքը կազմել են Սուրբ Գրիգոր Լուսավորչին պատկերող կերպարվեստի շուրջ 400 գործեր (որոնցից աշխատանքում ընդգրկվել են 251-ը)՝ խճանկարներ, որմնանկարներ, մանրանկարներ, հնատիպ գրքերի և մեկէջյա փորագրանկարներ, սրբանկարներ, գեղանկարներ, ինչպես նաև եկեղեցական կիրառական արվեստի նմուշներ, որոնց զգալի մասը գտնվում է Մաշտոցյան Մատենադարանում, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Երուսաղեմի և Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքարաններում, Ռոմիինիայի, Պարսկաստանի և Լիբանանի հայոց թեմերի գրադարաններում, Վենետիկի և Վիեննայի Մխիթարյան միաբանություններում, Նեապոլի Սուրբ Գրիգոր Հայի վանական համալիրի ֆոնդերում, ինչպես նաև մասնավոր հավաքածուներում և

---

<sup>14</sup> **Բարթիկյան Հ.**, «Դաշանց թուղթ», կազմը, ստեղծման ժամանակը, հեղինակն ու նպատակը», Պատմա-բանասիրական հանդես, № 2, 2004, էջ 65–116; **Հովհաննիսյան Ա.**, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հտ. Ա, Երևան, 1957, էջ 65–82; **Շիրինյան Է.**, «Սեղբեստրոսի Վարք»-ը և «Դաշանց Թուղթ»-ը, Բանբեր Մատենադարանի, № 17, 2006, էջ 53–77; **Garibian N.**, Costantino nella tradizione ecclesiastica armena, Enciclopedia Costantiniana sulla figura e l'immagine dell'imperatore del cosiddetto Editto di Milano, vol. II, Roma, 2013, pp. 441–461; **Bais M.**, Costantino nelle fonti storiografiche armene, Costantino e l'oriente: l'impero, i suoi confini e le sue estensioni, Roma, 2016, pp. 57–211; **Ղարիբյան Ն., Թորոսյան Վ., Բաբայան Գ.**, Կոստանդին Մեծ և Տրդատ Մեծ (ցուցահանդեսի պատկերագիրը), Երևան, 2022; **Թորոսյան Վ.**, Ո՞ր կաթողիկոսին է «Դաշանց թղթում» կերպավորել Ս. Գրիգոր Լուսավորիչը, էջմիածին, հմր. ՀԸ, 2021, էջ 74–92:

էլեկտրոնային շտեմարաններում:

**Աշխատության մեթոդաբանությունը:** Ատենախոսության մեթոդաբանական հիմքը արվեստաբանական վերլուծության համալիր մեթոդն է: Կիրառված է նկարագրական, պատկերագրական, ոճական, աղբյուրագիտական, ձեռագրագիտական, իկոնոլոգիական (պատկերաբանական) և պատմահամեմատական վերլուծության համադրությունը: Պատկերագրական մեթոդը կիրառվում է սրբի կերպարի հիմնական նշանների, պատկերատիպերի, վարքագրական դրվագների և սիմվոլիկ տարրերի բացահայտման համար: Ոճական վերլուծության միջոցով ուսումնասիրվում են կերպարների կառուցվածքը, գծային և գունային լուծումները, շարժման և հանգստի հարաբերությունը, ծավալային կամ հարթային մոդելավորումը, բարոկկոյի, կլասիցիզմի, բյուզանդական և հայկական ավանդույթի դրսևորումները: Պատմահամեմատական մեթոդը հնարավորություն է տալիս տարբեր ժամանակների և տարածաշրջանների արվեստի գործերը դիտարկելու փոխադարձ կապերի մեջ: Աշխատանքում կարևոր է նաև գործառության մոտեցումը. յուրաքանչյուր ստեղծագործություն դիտարկվում է իր միջավայրում՝ եկեղեցական, վանական, տպագրական, համայնքային կամ քարոզչական: Այդ մոտեցումը թույլ է տալիս տարբերակել, օրինակ, կաթոլիկ Եվրոպայում ստեղծված փորագրանկարների քարոզչական բնույթը և հայկական միջավայրում նույն սրբի պատկերների հիշատակային, պաշտամունքային և ազգային-եկեղեցական գործառույթները:

**Աշխատության գործնական նշանակությունը:** Աշխատանքի արդյունքները, գիտական շրջանառության մեջ դրված նոր նյութերը և կատարված պատկերագրական վերլուծությունները կարող են օգտագործվել հայ և համաքրիստոնեական արվեստի պատմությանը, պատկերագրությանը և մշակութային փոխառնչություններին նվիրված հետազա հետազոտություններում, ինչպես նաև բուհական դասընթացների, ցուցահանդեսների և գիտամշակութային ծրագրերի պատրաստման ընթացքում:

**Աշխատության փորձաքննությունը:** Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել Արվեստի ինստիտուտի Կերպարվեստի բաժնի 2026 թվականի հունիսի 3-ի նիստում: Աշխատանքի հիմնական դրույթներն արտացոլվել են ութ գիտական հրապարակումներում, որոնցից երկուսը հրատարակվել են Scopus շտեմարանում ինդեքսավորվող միջազգային գրախոսվող ամսագրերում (Vestnik of Saint Petersburg University. Arts & Religiovedenie), իսկ վեցը՝ հայաստանյան գիտական պարբերականներում (Պատմա-բանասիրական հանդես, Արվեստագիտական հանդես, Բանբեր Մատենադարանի, Գեղարվեստի ակադեմիայի Տարեգիրք): Աշխատանքի որոշ արդյունքներ զեկուցվել են Մաշտոցյան Մատենադարանի Երիտասարդական միջազգային 7-րդ (նոյեմբերի 25-27, 2021 թ., Երևան) և 9-րդ (նոյեմբերի 23-25, 2023 թ., Երևան) գիտաժողովներում, ԳԱԱ Արվեստի ինստիտուտի Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական 16-րդ նստաշրջանում (դեկտեմբերի 08-11, 2023 թ., Երևան), Մաշտոցյան Մատենադարանի Միջնադարագիտական 10-րդ (նոյեմբերի 28-30, 2024 թ., Երևան) և 11-րդ (նոյեմբերի 27-29, 2025 թ., Երևան) միջազգային գիտաժողովներում, ինչպես նաև «Армяне России: история, культура, общее будущее» միջազգային գիտաժողովում (նոյեմբերի 12-13, 2024 թ., Դոնի Ռոստով, Ռուսաստան):

**Աշխատության կառուցվածքը:** Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության և նկարների ցանկերից, ինչպես նաև հավելվածային պատկերաշարից:

## **ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

Ներածության մեջ հիմնավորվում է թեմայի արդիականությունը, ներկայացվում են ուսումնասիրվածության աստիճանը, հետազոտության նպատակն ու խնդիրները, ժամանակագրական և աշխարհագրական սահմանները, մեթոդաբանությունը և գիտական նորույթը:

### **ԳԼՈՒԽ ԱՌԱԶԻՆ**

#### **ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԶԻ ՊԱՏԿԵՐԱԳՐԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹԸ**

##### **9-17-ՐԴ ԴԱՐԵՐԻ ԿԵՐՊԱՐԿԵՏՈՒՄ**

Առաջին գլուխը նվիրված է Սուրբ Գրիգոր Լուսավորչի պատկերագրության ձևավորման և զարգացման վաղ փուլերի քննությանը: Այստեղ ուսումնասիրվում են այն պատկերագրական նախատիպերը, որոնք ձևավորվել են բյուզանդական, ուղղափառ և հայկական միջավայրերում և հետագայում դարձել Լուսավորչի կերպարի ներկայացման հիմնական հիմքը: Գլխի նպատակն է բացահայտել, թե ինչ ճանապարհով է Հայոց եկեղեցու սուրբը ներառվել համաքրիստոնեական պատկերագրական համակարգի մեջ, և ինչպես են ձևավորվել նրա կերպարի հիմնական պատկերատիպերը:

#### **I Ա. Գրիգոր Լուսավորչին պատկերող խճանկարները և որմնանկարները ուղղափառ միջավայրում**

Այս ենթագլխում քննվում են Սուրբ Գրիգոր Լուսավորչի ամենավաղ հայտնի մոնումենտալ պատկերները՝ սկսած Կոստանդնուպոլսի Սուրբ Սոֆիայի խճանկարներից մինչև Բյուզանդիայի և հետբյուզանդական աշխարհի բազմաթիվ եկեղեցիների որմնանկարները: Ուսումնասիրվում է, թե ինչ հանգամանքներում Լուսավորիչը ներառվեց ուղղափառ եկեղեցու հայրերի շարքում և ինչպես ձևավորվեց նրա՝ որպես եպիսկոպոսի և հայրապետի պատկերագրական կերպարը:

Քննության են ենթարկվում Հունաստանի, Կիպրոսի, Բուլղարիայի, Ռումինիայի, Ռուսաստանի և այլ երկրների եկեղեցիներում պահպանված պատկերները: Բացահայտվում են դրանց պատկերագրական ընդհանրությունները, միաժամանակ վերլուծվում են տեղային առանձնահատկությունները, որոնց արդյունքում որոշ պատկերներում սուրբը ստանում է յուրահատուկ կերպարային շեշտադրումներ:

Առանձին ուշադրություն է դարձվում նաև Լուսավորչի վարքի թեմատիկ տեսարաններին, հատկապես Խոր Վիրապում բանտարկության, Տրդատի բժշկության և Հայաստանի քրիստոնեացման պատկերներին: Քննվում են ինչպես հունական որմնանկարները, այնպես էլ ռուսական սրբապատկերները, որոնցում Լուսավորչի վարքը ներկայացված է մանրամասն պատմողական շարքերով: Ենթագլուխն ավարտվում է հայկական մոնումենտալ գեղանկարչության վաղ օրինակների՝ Ախթալայի և Տիգրան Հոնենցի եկեղեցիների պատկերաշարերին անդրադարձով:

## **I Բ. Գրիգոր Լուսավորչին պատկերող մանրանկարները բյուզանդական ձեռագրերում**

Երկրորդ ենթագլուխը նվիրված է բյուզանդական ձեռագրերում պահպանված Սուրբ Գրիգորի մանրանկարներին: Ուսումնասիրվում են Հայսնավորքերը, Սաղմոսագրքերը և այլ ձեռագրեր, որոնցում սուրբը ներկայացվում է որպես եկեղեցու հայր, ինչպես նաև՝ որպես վարքագրական պատմությունների գլխավոր կերպար:

Վերլուծվում են Վասիլ II-ի Հայսնավորքի, Թեոդորոսի Սաղմոսագրքի, Բողբեյան գրադարանի ձեռագրերի և այլ կարևոր աղբյուրների մանրանկարները: Տույց է տրվում, որ սկզբնական շրջանում գերակշռում էր սրբի դիմանկարային ներկայացումը, մինչդեռ հետագայում զարգանում են վարքագրական թեմաները:

Ենթագլուխը փաստում է, որ բյուզանդական մանրանկարչությունն է ձևավորել այն պատկերագրական հիմքը, որի վրա հետագայում զարգացել են թե՛ հայկական, թե՛ եվրոպական պատկերային ավանդույթները:

### **I Գ. Գրիգոր Լուսավորչի կերպարը հայկական մանրանկարչության մեջ**

Գլխի առավել ծավալուն ենթագլուխը նվիրված է հայկական մանրանկարչության մեջ Լուսավորչի պատկերագրությանը: Ուսումնասիրվել են Մաշտոցյան Մատենադարանի, Վենետիկի և Վիեննայի Մխիթարյան միաբանությունների, Երուսաղեմի Հայոց պատրիարքարանի, Չեսթերբիթի գրադարանի և այլ կենտրոնների շուրջ 150 ձեռագրեր:

Նյութը դասակարգվել է պատկերագրական հիմնական խմբերի: Առաջին խումբը ներառում է Լուսավորչի դիմանկարները՝ որպես հայրապետի և եկեղեցու առաջնորդի: Երկրորդը վերաբերում է Խոր Վիրապի տեսարաններին, որոնցում ձևավորվում են սրբի հոգևոր տոկոսությունն ընդգծող պատկերային լուծումներ: Երրորդ խումբը ներկայացնում է Տրդատի բժշկության և Հայաստանի քրիստոնեացման տեսարանները, որտեղ առավել ակնառու է պատմողական հարստությունը: Խմբավորվել են նաև Սուրբ Գրիգորի տեսիլը, արքայական ընտանիքը՝ Էջմիածնի համայնապատկերում և Լուսավորչին՝ Աստվածաշնչյան դրվագներում ներկայացնող մանրանկարները: Որպես Հայոց Դարծի թեմայի անբաժան կերպարներ՝ կարևորվել է նաև Տրդատ Երրորդ արքայի և Սրբուհի Հռիփսիմեի մանրանկարների վերլուծությունը:

Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում 17-18-րդ դարերի ձեռագրերին, որոնցում նկատվում են եվրոպական գեղարվեստական ազդեցություններ, տարածական մտածողության զարգացում և գեղանկարչական նոր մոտեցումներ: Արդյունքում ցույց է տրվում, որ հայկական մանրանկարչության մեջ Լուսավորչի պատկերագրությունը եղել է շարունակաբար զարգացող և նոր բովանդակություններով հարստացող համակարգ:

## **ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ**

**ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՊԱՏԿԵՐԸ 16-20-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ  
ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ՍՏԵՂԾՎԱԾ ԱՐՎԵՍՏԻ ԳՈՐԾԵՐՈՒՄ**

Երկրորդ գլուխը նվիրված է Եվրոպայում ձևավորված՝ Լուսավորչի պատկերագրությանը: Այստեղ առաջին անգամ մեկ ամբողջական համակարգում

քննվում են իտալական, ավստրիական, գերմանական, ֆրանսիական, ռումինական և այլ եվրոպական երկրներում ստեղծված արվեստի գործերը: Գրվելը ցույց է տալիս, թե ինչպես է Հայոց եկեղեցու սրբի կերպարը դարձել համաեվրոպական քրիստոնեական մշակույթի մաս:

## **II Ա. Գրիգոր Լուսավորչի կերպարը Նեապոլի Գրիգոր Հայի վանական համալիրի որմնանկարներում**

Ենթագլուխը նվիրված է Եվրոպայում Լուսավորչի պաշտամունքի կարևորագույն կենտրոններից մեկի՝ Նեապոլի Գրիգոր Հայի (Սան Գրեգորիո Արմենո) վանական համալիրի պատմության և գեղարվեստական հարդարանքի ուսումնասիրությանը: Ենթադիտում նախ ներկայացվում է վանքի հիմնադրման և գործունեության պատմությունը, նրա կապը հայկական ավանդույթի հետ, ինչպես նաև Գրիգոր Լուսավորչի մատուցած ծառայությունների՝ Իտալիա տեղափոխման վերաբերյալ ձևավորված ավանդույթները և գիտական տեսակետները: Այնուհետև քննվում են համալիրի որմնանկարները, որոնցում մանրամասնորեն ցուցադրում են Սուրբ Գրիգորի կյանքի կարևոր դրվագները՝ վիրապը նետվելուց մինչև մահը: Վերլուծվում են որմնանկարների պատկերագրությունը, ոճը, հորինվածքային առանձնահատկությունները, կերպարների դասավորությունը, ինչպես նաև դրանց ստեղծման ընթացքում կիրառված իտալական վերածննդի և բարոկկոյի գեղարվեստական սկզբունքները: Առանձնակի ուշադրություն է դարձվում այն հանգամանքին, որ Նեապոլի այս համալիրը ոչ միայն Լուսավորչի պաշտամունքի կենտրոն էր, այլև նրա պատկերագրության տարածման կարևոր հանգույց, որի միջոցով Հայոց եկեղեցու սուրբը էլ ավելի ճանաչելի դարձավ եվրոպական մշակութային միջավայրում:

## **II Բ. Գրիգոր Լուսավորչին ներկայացնող՝ Եվրոպայում տպված մեկէջյա փորագրանկարները**

Ենթագլուխը վերաբերում է տվյալ թեմայի ամենաքիչ ուսումնասիրված, սակայն կարևորագույն արվեստի գործերից՝ Գրիգոր Լուսավորչի չարչարանքները պատկերող մեկէջյա փորագրանկարներին: Այստեղ քննության են առնվում Եվրոպայի տարբեր քաղաքների տպարաններում հրատարակված առանձին թերթերով փորագրանկարները, որոնք լայն տարածում են ունեցել ուխտավորների, հոգևորականների և հավատացյալների շրջանում: Աշխատանքի ընթացքում գտնվել են մի քանի նորահայտ նմանօրինակ պատկերներ, որոնք նախկինում գիտական շրջանառության մեջ չեն եղել: Բացահայտված փորագրանկարներից կարևորագույնը այս շարքում ամենից վաղ թվագրություն ունեցողն է, ստեղծվել է 17-րդ դարի առաջին կեսին իտալացի փորագրիչ Լուկաս Չամբերլանուսի կողմից: Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ իտալացի նկարչի մտապատկերով ստեղծված՝ Լուսավորչի չարչաչարանքների այս պատկերներն են հետագայում նախօրինակ դարձել նույն թեմայով պատկերների մեծամասնության համար: Անդրադարձ է կատարվում նաև փորագրանկարների վրա առկա արձանագրություններին, որոնք որոշ դեպքերում ունեն կաթոլիկ քարոզչական ուղղվածություն, իսկ որոշ դեպքերում՝ պարզապես նվիրատվական են կամ Լուսավորչին փառաբանող:

Ցույց է տրվում, որ այս ստեղծագործությունները դարձել են սրբի պաշտամունքի տարածման կարևոր միջոց՝ նպաստելով նրա կերպարի

հանրահռչակմանը եվրոպական միջավայրում, ինչպես նաև նշված պատկերաստիպերի տարածմանը՝ ողջ աշխարհի հայաշատ կենտրոններում:

## **II Գ. Գրիգոր Լուսավորչի կերպարը եվրոպայում հրատարակված գրքերի փորագրանկարներում, սրբանկարներում և գեղանկարներում**

Այս ենթագլխում ուսումնասիրվում են տարբեր լեզուներով հրատարակված գրքերի նկարազարդումները, սրբապատկերները և գեղանկարները, որոնցում Սուրբ Գրիգորը ներկայացվում է որպես քրիստոնեական աշխարհի նշանավոր հայրապետներից մեկը: Քննվում են այն ստեղծագործությունները, որոնք ստեղծվել են պատմագիտական, վարքագրական, աստվածաբանական և միսիոներական հրատարակությունների համար: Վերլուծվում են սրբի կերպարի ներկայացման տարբեր ձևերը՝ որպես եկեղեցու հիմնադիր, մկրտիչ, հրաշագործ, նահատակ և հայ ժողովրդի հոգևոր առաջնորդ: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ եվրոպական արվեստում աստիճանաբար ձևավորվում է Լուսավորչի նոր ընկալում, որտեղ հայկական պատմական միջավայրը հաճախ համադրվում է արևմտաեվրոպական գեղարվեստական մտածողության հետ: Բացահայտվում են բարոկկոյի, կլասիցիզմի և ակադեմիական արվեստի ազդեցությունները, ինչպես նաև այն պատկերագրական նորամուծությունները, որոնք բացակայում են հայկական ավանդույթում: Միաժամանակ փաստվում է, որ եվրոպացի արվեստագետները հաճախ օգտվել են հայկական պատմական սկզբնաղբյուրներից:

## **II Դ. Գրիգոր Լուսավորչի կերպարը ռումինահայ կերպարվեստում**

Գլխի վերջին ենթագլուխը նվիրված է արևելաեվրոպական հայ համայնքների արվեստին: Այստեղ ուսումնասիրվում են Ռումինիայի հայկական եկեղեցիներում և համայնքային կենտրոններում պահպանված սրբանկարները, գեղանկարները և այլ ստեղծագործություններ: Հիմնական ուշադրությունը կենտրոնացված է այն հարցի վրա, թե ինչպես է հայկական պատկերագրական ավանդույթը փոխազդել բալկանյան և հետբյուզանդական արվեստի հետ: Վերլուծվում են կերպարային, ոճական և պատկերագրական առանձնահատկությունները, բացահայտվում են տեղի արվեստագետների կողմից կատարված վերամշակումները և նոր մեկնաբանությունները: Ցույց է տրվում, որ ռումինահայ արվեստը պահպանել է հայկական ինքնությունը, սակայն միաժամանակ կրել է շրջակա մշակութային միջավայրի ազդեցությունը, ինչի արդյունքում ձևավորվել են Լուսավորչի կերպարի ինքնատիպ տարբերակներ:

## **ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ**

### **ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՊԱՏԿԵՐԸ 18-20-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍՏԵՂԾՎԱԾ ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ ԳՈՐԾԵՐՈՒՄ**

Ատենախոսության երրորդ գլուխը նվիրված է 18-20-րդ դարերում հայկական միջավայրում ստեղծված արվեստի գործերում Սուրբ Գրիգոր Լուսավորչի կերպարի ուսումնասիրությանը: Եթե առաջին գլուխը բացահայտում էր պատկերագրության ձևավորման վաղ փուլերը, իսկ երկրորդը ներկայացնում էր նրա տարածումն ու զարգացումը եվրոպական արվեստում, ապա երրորդ գլուխը կենտրոնանում է հենց

հայկական մշակութային միջավայրում ձևավորված ուշ շրջանի պատկերագրական գործընթացների վրա: Այստեղ քննվում է, թե ինչպես են նոր ժամանակաշրջանում վերաիմաստավորվել միջնադարյան պատկերագրական ավանդույթները, ինչ նոր թեմաներ և պատկերատիպեր են ձևավորվել, ինչպես նաև ինչ դեր է ունեցել Լուսավորչի կերպարը ազգային, եկեղեցական և մշակութային ինքնության պահպանման գործում:

### **III Ա. Գրիգոր Լուսավորչի պատկերները Հայաստանի առաջին տպարանի հրատարակություններում**

Ենթագլուխը նվիրված է Սուրբ Էջմիածնի տպարանի գործունեության ընթացքում ստեղծված և հրատարակված պատկերներին: Ուսումնասիրվում են 18-րդ դարի երկրորդ կեսին Սիմեոն Ա Երևանցու նախաձեռնությամբ հիմնված տպարանի գրքերը, որոնցում Սուրբ Գրիգոր Լուսավորչի կերպարը զբաղեցնում է առանձնահատուկ տեղ: Վերլուծվում են դրանց պատկերագրական աղբյուրները, ստեղծման պատմական միջավայրը, հորինվածքային առանձնահատկությունները և գեղարվեստական լուծումները: Առանձին ուշադրություն է դարձվում այն հանգամանքին, որ Էջմիածնի տպարանի պատկերները մի կողմից շարունակում են հայկական միջնադարյան ավանդույթները, իսկ մյուս կողմից որոշակիորեն կրում են եվրոպական փորագրանկարչության ազդեցությունը: Հստակ օրինակներով ցույց է տրվում, թե ինչպես են Սուրբ Էջմիածնի տպարանում հրատարակված փորագրանկարները վերափորագրվել և տեղ գտել նաև Նոր Նախիջևանի և Կոստանդնուպոլսի որոշ տպարանների հրատարակություններում:

### **III Բ. Գրիգոր Լուսավորիչը՝ որպես բարեխոս «Տիրամայրը Մանկան հետ» պատկերներում**

Այստեղ քննվում են այն ստեղծագործությունները, որոնցում Գահակալ Տիրամոր «Բարեխոսության» պատկերագրական տիպում ներառված է նաև Սուրբ Գրիգոր Լուսավորիչը: Հայտնի է, որ այս պատկերատիպում որպես համաքրիստոնեական գլխավոր բարեխոսներ հիմնականում պատկերվում են Հովհաննես Մկրտիչը և Ստեփանոս Նախավկան, մինչդեռ Սուրբ Գրիգորն այս շարքում ընդգրկվել է որպես հայ ժողովրդի բարեխոս և միջնորդ Աստվածածնի ու Քրիստոսի առջև: Ուսումնասիրվում են տարբեր ժամանակաշրջանների սրբանկարներ, գեղանկարներ, եկեղեցական վարագույրներ և այլ ստեղծագործություններ, որոնցում Լուսավորչի ներկայությունը ստեղծագործություններին հաղորդում է ազգային և եկեղեցական առանձնահատուկ շեշտադրում: Վերլուծվում են այդ պատկերների աստվածաբանական հիմքերը, դրանց կապը հայկական եկեղեցական մտածողության հետ, ինչպես նաև կերպարի խորհրդանշական նշանակությունը: Ցույց է տրվում, որ այս պատկերատիպը հատկապես մեծ տարածում է ստանում այնպիսի ժամանակաշրջաններում, երբ հայ ժողովուրդը քաղաքական ու հոգևոր դժվարություններ էր դիմագրավում, և Լուսավորչի կերպարը դիտարկվում էր որպես ազգային գոյության և եկեղեցական միասնության երաշխավոր:

### **III Գ. Գրիգոր Լուսավորչի և Հռոմի Սեղբեստրոս Ա պապի հանդիպման պատկերները կերպարվեստում**

Ենթագլուխը նվիրված է Լուսավորչի վարքի հետ անբաժան կարևոր թեմաներից մեկին, որի հիմքում ընկած է «Դաշանց թղթի» ավանդությունը, ըստ որի՝ Սուրբ Գրիգոր Լուսավորիչը հանդիպել է Հռոմի Սեղբեստրոս Ա պապին, և նրանց միջև հաստատվել է հոգևոր ու եկեղեցական միասնություն: Ենթագլխում քննվում են այս թեմայով ստեղծված հայկական և եվրոպական արվեստի գործերը՝ փորագրանկարներ, սրբանկարներ և գեղանկարներ: Ուսումնասիրվում են հանդիպման տարբեր պատկերագրական տարբերակները, կերպարների ներկայացման ձևերը, խորհրդանշական տարրերը և դրանց գաղափարական նշանակությունը: Առանձնակի ուշադրություն է դարձվում այն հանգամանքին, որ այս տեսարանները պարզապես պատմողական բնույթ չեն կրում, այլ արտահայտում են Հայ եկեղեցու ինքնազիտակցության, համաքրիստոնեական աշխարհի հետ հարաբերությունների և եկեղեցական ավանդույթի վերաբերյալ պատկերացումները: Վերլուծության արդյունքում բացահայտվում են թեմայի զարգացման հիմնական փուլերը և դրա տարբեր մեկնաբանությունները տարբեր դարաշրջաններում:

#### **ԵՋՐԱԿԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Ուսումնասիրության արդյունքում հանգեցինք հետևյալ եզրակացությունների:

- Սուրբ Գրիգոր Լուսավորչի պատկերագրական ավանդույթը ձևավորվել և զարգացել է երկարատև ու բազմաշերտ գործընթացի արդյունքում՝ ընդգրկելով ինչպես բյուզանդական, այնպես էլ հայկական և հետագայում՝ եվրոպական գեղարվեստական միտումները: Սկզբնական փուլում Լուսավորչի կերպարը հաստատվում է որպես համաքրիստոնեական սուրբ՝ ընդգրկվելով ուղղափառ եկեղեցու հայրերի շարքում և ստանալով կայուն, կանոնական պատկերատիպ՝ ճակատային կանգնած դիրքով, օրհնող ժեստով և ձեռքին Ավետարան: Այս տիպը, ձևավորվելով բյուզանդական արվեստում, հատկապես Սուրբ Սոֆիայի խճանկարների ծրագրում, հետագայում տարածվում է ողջ ուղղափառ աշխարհում և դառնում նրա պատկերագրության հիմնական ձևը:

- Գրիգոր Լուսավորչի պատկերագրությունը տարբեր մշակութային միջավայրերում ենթարկվել է տեղային մեկնաբանությունների: Բյուզանդական և հետբյուզանդական արվեստում նրա կերպարը պահպանել է կանոնական բնույթը՝ ընդգծելով եկեղեցու հայրապետի կարգավիճակը, մինչդեռ ռուսական սրբանկարչության մեջ այն երբեմն զուգահեռվել է աստվածաշնչյան տեսարանների հետ, իսկ հայկական մանրանկարչությունում ստացել է առավել բազմազան և դինամիկ զարգացում:

- Նեապոլի Գրիգոր Հայի վանական համալիրը Լուսավորչին նվիրված պատկերաշարի ծավալով, շքեղությամբ և գաղափարական հագեցվածությամբ բացառիկ երևույթ է հայկական և իտալական արվեստում՝ արտացոլելով Սուրբ Գրիգորի և հայ ժողովրդի ունեցած հեղինակությունը Եվրոպայում: Լուկա Ջորդանոյի և

մյուս վարպետների ստեղծած որմնանկարները, միավորելով վարքագրական ավանդույթն ու բարոկկոյի գեղարվեստական լեզուն, ձևավորում են Լուսավորչի կյանքի և հրաշագործ վարքի ամբողջություն:

- Սուրբ Գրիգոր Լուսավորչի պաշտամունքը չի սահմանափակվել միայն Նեապոլ քաղաքով, այլ լայնորեն տարածված է եղել Հարավային Իտալիայի տարբեր շրջաններում: Նեապոլից բացի, այդ պաշտամունքի կարևոր կենտրոններից են եղել նաև Նարոո և Բարի քաղաքները, որտեղ մինչև այսօր պահպանվել են սրբին նվիրված միջնադարյան եկեղեցիներ և արվեստի գործեր:

- Սուրբ Գրիգորի չարչարանքները պատկերող մեկէջյա փորագրանկարների հիմնական պատկերատիպը ձևավորվել է Լուկաս Չամբերլանուսի ստեղծագործության հիման վրա, որի՝ ազաթանգեղոսյան ավանդությանը մոտ և մանրամասն մշակված հորինվածքները արագորեն ստացել են կանոնիկ բնույթ ու դարեր շարունակ փոխանցվել աշխարհի տարբեր հայաշատ կենտրոններում:

- Մեկէջյա փորագրանկարները, կախված պատմիչատուներից, ունեցել են տարբեր գաղափարական ուղղվածություն. կաթոլիկ միջավայրում դրանք հաճախ ծառայել են հայ-հռոմեական միության քարոզչությանը, մինչդեռ հայկական առաքելական շրջանակներում հիմնականում նպատակ են ունեցել փառաբանելու Սուրբ Գրիգորին, հայցելու նրա բարեխոսությունը և հանրամատչելի ձևով ներկայացնելու նրա վարքն ու սրբագործությունը: Իրենց շարժականության, մատչելիության և լայն տարածման շնորհիվ մեկէջյա փորագրանկարները տարածվել են աշխարհով, թեև հենց այդ նույն պատճառներով մեծ մասամբ պահպանվել են միայն եզակի կամ վնասված օրինակներով:

- Գրիգոր Լուսավորչի պատկերագրությունն առանձնահատուկ կարևորություն է ունեցել հայկական գրքարվեստում: Հնատիպ գրքերում նրա կերպարի ներառումն այնքան է կարևորվել, որ երբեմն եվրոպական այլ սրբերի համար ստեղծված փորագրանկարները հարմարեցվում և օգտագործվում էին Լուսավորչին ներկայացնելու նպատակով, իսկ այլ դեպքերում հատուկ նրա համար պատվիրվում և փորագրվում էին նոր պատկերներ:

- Ռումինայի մոլդովական և տրանսիլվանական 17-19-րդ դդ. հայկական սրբանկարները, պահպանելով հայկական սրբերի, ազգային եկեղեցական ավանդույթների և հայ հոգևոր ինքնության հետ կապված բովանդակային շերտը, շարունակաբար հանդես են եկել որպես հայկական սրբանկարչության առանձնահատուկ դրսևորումներ:

- Սուրբ Էջմիածնի առաջին տպարանի գործունեությունը 18-րդ դարում ոչ միայն սկիզբ դրեց հայաստանյան գրատպությանը, այլև ձևավորեց հայկական տպագիր արվեստի ինքնուրույն պատկերագրական լեզու: Տպարանի փորագրանկարներում միախուսվեցին միջնադարյան մանրանկարչական ավանդույթը, ազգային եկեղեցական խորհրդաբանությունը և ժամանակի գեղարվեստական միտումները: Կարող ենք ասել, որ Էջմիածնի տպարանը հանդես եկավ որպես այն մշակութային միջավայրը, որտեղ ձեռագրային ավանդույթը շարունակվեց արդեն

տպագիր արվեստի նոր ձևերով՝ հիմք դնելով հետագա դարերի հայկական պատկերագրական և գրքարվեստային զարգացմանը:

- Միջնադարյան քրիստոնեական արվեստում «Տիրամայրը Մանկան հետ» պատկերներում գլխավոր բարեխոսների դերում հիմնականում հանդես էին գալիս Հովհաննես Մկրտիչը և Ստեփանոս Նախավկան, մինչդեռ հայկական արվեստում այդ շարքը համալրվում է նաև Հայոց Լուսավորչի կերպարով, որը ներկայացվում է որպես հայ ժողովրդի մշտական երկնային պաշտպան և բարեխոս: Սկզբնավորվելով միջնադարյան մանրանկարչության մեջ՝ այս պատկերատիպը առավել լայն տարածում է ստանում 17–18-րդ դարերի սրբանկարչության և փորագրանկարչության մեջ:

- «Դաշանց թղթի» ավանդազրույցը միջնադարյան հայ և եվրոպական մշակույթում վերածվել էր գաղափարական կարևոր հենքի, որի միջոցով տարբեր կերպ էին մեկնաբանվում հայ-հոռոմեական եկեղեցաքաղաքական հարաբերությունները: Եվրոպական արվեստում շեշտադրվում էր Հռոմի գերակայության գաղափարը, մինչդեռ հայկական պատկերներում առավել կարևոր էր երկու եկեղեցիների և առաջնորդների հոգևոր հավասարությունն ու եղբայրական միաբանությունը, ինչի շնորհիվ այս թեման դարեր շարունակ պահպանեց իր քաղաքական, դավանաբանական և գեղարվեստական արդիականությունը:

- Սուրբ Գրիգոր Լուսավորչի պատկերագրությունը պատմական տարբեր ժամանակաշրջաններում և մշակութային տարբեր միջավայրերում զարգացել է որպես դինամիկ ու բազմաշերտ համակարգ՝ պահպանելով իր հիմնական դավանաբանական և գաղափարական առանցքը, սակայն միաժամանակ շարունակաբար վերահիմաստավորվելով նոր գեղարվեստական, քաղաքական և եկեղեցական համատեքստերում:

## **ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀԵՂԻՆԱԿԻ ՀՐԱՏԱՐԱԿԱԾ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

1. Դևրիկյան Շ., Գրիգոր Լուսավորչին ներկայացնող մեկէջյա փորագրանկարները 18-րդ դարում Կոստանդնուպոլսում տպագրված երեք «Յայսմաուրք»-ներում, Բանբեր Մատենադարանի, 33, 2022, էջ 331-341:

2. Դևրիկյան Շ., Գրիգոր Լուսավորչի վարքը ներկայացնող իտալական մի նորահայտ փորագրանկար, Արվեստագիտական հանդես, 1(9), 2023, էջ 254-265:

3. Դևրիկյան Շ., Գրիգոր Լուսավորչի և Սեդրեստրոս Առաջին պապի «հանդիպման» պատկերներն արվեստում, Պատմա-բանասիրական հանդես, 2, 2024, էջ 135-149:

4. Manukyan S., Devrikyan Sh., The Image of Gregory the Illuminator in Romanian-Armenian Icon Painting, Vestnik of Saint Petersburg University. Arts, No. 3, 2024, pp. 488-503.

5. Soghoyan A., Devrikyan Sh., Pagan and Christian Interpretations of Dream-visions in “History of Armenia” Published by Hakobos Issavertents, Religiovedene, No. 3, 2024, pp. 110–119.

6. Դերիկյան Շ., Կանոն Սրբոյ Շողակաթին՝ այսինքն Սրբոյ Էջմիածնի. Էջմիածնի Մայր տաճարի հիմնարկման տեսիլը՝ Էջմիածնի առաջին տպարանի փորագրանկարներում, Լրատու հայկական գրադարանային ասոցիացիայի, 2 (6), 2025, էջ 115-122:

7. Դերիկյան Շ., Նեապոլի Գրիգոր Հայի վանական համալիրը. Հիմնադրման պատմությունը և Գրիգոր Լուսավորչի վարքը ներկայացնող որմնանկարները (մաս առաջին), Գեղարվեստի ակադեմիայի Տարեգիրք, 17/2, 2024, էջ 54-77:

8. Դերիկյան Շ., Գրիգոր Լուսավորչի վարքին նվիրված Անտոնիո Մարիա Բոնուչիի գիրքը և Նեապոլի Գրիգոր Հայի եկեղեցու որմնանկարները (մաս երկրորդ), Գեղարվեստի ակադեմիայի Տարեգիրք, 20/1, 2026, էջ 79-102:

## ДЕВРИКЯН ШОГАКАТ ВАРДАНОВНА

### Образ Святого Григория Просветителя в армянском и европейском искусстве (в контексте IX–XX веков)

Диссертация посвящена исследованию иконографического развития и художественных интерпретаций образа святого Григория Просветителя — первого Католикоса Армении и единственного общехристианского святого Армянской Церкви — в армянском, византийском и европейском искусстве IX–XX вв. Основной целью диссертации является рассмотрение образа святого Григория Просветителя не в рамках отдельной художественной среды или вида искусства, а как образа, обладающего длительной иконографической эволюцией, различные этапы и проявления которой обусловлены историческими, конфессиональными, политическими и художественными факторами. В соответствии с поставленной целью были определены следующие задачи:

- выявить, собрать и ввести в научный оборот максимально возможное количество произведений искусства, изображающих святого Григория Просветителя, из различных географических, культурных и конфессиональных сред;
- изучить собранный материал, по возможности уточнить датировку памятников, их авторство, место создания и историко-культурный контекст, поскольку значительная часть произведений сохранилась без дат и авторских указаний;
- систематизировать и сопоставить армянскую и, особенно, иностранную научную литературу по теме исследования, рассматривая её в рамках единого научного анализа;
- выявить многослойный характер иконографии святого Григория Просветителя, исторические, конфессиональные и художественные основы её формирования, а также изменения и развитие иконографических типов в различные исторические периоды;
- определить локальные и стилистические особенности изображений, сформировавшихся в различных регионах, рассматривая их связь с общими иконографическими прототипами и общехристианской художественной традицией;
- раскрыть взаимодействие армянского и европейского искусства в рамках иконографии святого Григория Просветителя и показать особенности распространения и восприятия его образа в различных культурных средах.

Диссертация состоит из введения, трёх глав, заключения, списка использованной литературы, списка иллюстраций и приложения с изобразительным материалом.

В результате исследования были сделаны следующие выводы:

- Иконографическая традиция святого Григория Просветителя сформировалась в результате длительного и многоуровневого процесса, вобравшего в себя византийские, армянские, а позднее и европейские художественные тенденции. На раннем этапе образ святого утвердился как образ общехристианского святого, включённого в ряд Отцов Православной Церкви. Сформировался устойчивый

канонический иконографический тип: фронтально стоящая фигура с благословляющим жестом и Евангелием в руках. Возникнув в византийском искусстве, прежде всего в мозаичной программе собора Святой Софии, этот тип впоследствии распространился по всему православному миру.

- В различных культурных средах иконография Григория Просветителя подвергалась локальным интерпретациям. В византийском и поствизантийском искусстве его образ сохранял канонический характер и подчёркивал достоинство церковного иерарха, тогда как в русской иконописи отдельные сюжеты соотносились с библейскими прообразами, а в армянской миниатюре иконография получила особенно многообразное и динамичное развитие.

- Монастырский комплекс Сан-Грегорио Армено в Неаполе является исключительным явлением армянского и итальянского искусства по масштабу, художественному уровню и идейной насыщенности цикла, посвящённого Григорию Просветителю. Фрески Луки Джордано и других мастеров, объединяя агиографическую традицию и художественный язык барокко, формируют целостное повествование о жизни и чудотворной деятельности святого.

- Почитание святого Григория Просветителя не ограничивалось Неаполем, но было широко распространено в различных регионах Южной Италии. Наряду с Неаполем важными центрами его культа являлись города Нардо и Бари, где до настоящего времени сохранились посвящённые ему средневековые храмы и произведения искусства.

- Основной иконографический тип однолистных гравюр, изображающих мучения святого Григория, сформировался на основе произведений Лукаса Чамберлануса. Композиции, близкие к агафангеловской традиции и отличающиеся детальной разработкой, быстро приобрели канонический характер и на протяжении столетий воспроизводились в различных армянских центрах мира.

- Однолистные гравюры, в зависимости от круга заказчиков, имели различную идейную направленность. В католической среде они нередко служили пропаганде армяно-римской унии, тогда как в армянской апостольской традиции их основным назначением было прославление святого Григория, обращение к его заступничеству и популяризация его жития. Благодаря мобильности, доступности и широкому распространению эти гравюры получили международное распространение, хотя по тем же причинам до наших дней чаще всего дошли в единичных или повреждённых экземплярах.

- Иконография Григория Просветителя занимала особое место в армянском книжном искусстве. Значимость его образа в старопечатных книгах была столь велика, что в ряде случаев для его изображения адаптировались гравюры, первоначально созданные для других европейских святых, а в иных случаях специально заказывались и выполнялись новые композиции.

- Армянские иконы Молдавии и Трансильвании XVII–XIX вв., сохраняя содержательные пласты, связанные с армянскими святыми, национальными церковными традициями и армянской духовной идентичностью, представляют собой своеобразное и самобытное направление армянского иконописного искусства.

- Деятельность первой типографии Святого Эчмиадзина в XVIII веке не только положила начало книгопечатанию на территории Армении, но и способствовала формированию самостоятельного иконографического языка армянского печатного искусства. В её гравюрах соединились традиции средневековой миниатюры, национальная церковная символика и художественные тенденции эпохи. Типография Святого Эчмиадзина стала тем культурным пространством, где рукописная традиция получила продолжение уже в формах печатного искусства, заложив основы дальнейшего развития армянской иконографии и книжного оформления.

- В средневековом христианском искусстве главными заступниками в композициях «Богоматерь с Младенцем» обычно выступали Иоанн Креститель и первомученик Стефан, тогда как в армянском искусстве этот ряд дополняется образом Григория Просветителя, представленным как постоянный небесный покровитель и заступник армянского народа. Возникнув в средневековой миниатюре, данный иконографический тип получил особенно широкое распространение в армянской иконописи и гравюре XVII–XVIII вв.

- Предание о «Грамоте любви и согласия» в средневековой армянской и европейской культуре превратилось в важную идеологическую основу для осмысления армяно-римских церковно-политических отношений. В европейском искусстве акцент делался на идее первенства Рима, тогда как в армянских изображениях подчёркивались духовное равенство и братское единство двух Церквей и их предстоятелей, благодаря чему данный сюжет на протяжении веков сохранял свою политическую, конфессиональную и художественную актуальность.

- Иконография святого Григория Просветителя в различные исторические эпохи и в разных культурных средах развивалась как динамичная и многослойная система, сохранявшая свою основную богословскую и идейную основу, но одновременно постоянно переосмыслявшаяся в новых художественных, политических и церковных контекстах.

## SHOGHAKAT DEVRIKYAN

### **The Image of Saint Gregory the Illuminator in Armenian and European Art (in the Context of the 9th–20th Centuries)**

The dissertation is dedicated to the study of the iconographic development and artistic interpretations of the image of Saint Gregory the Illuminator—the first Catholicos of Armenia and the only Pan-Christian saint of the Armenian Church—in Armenian, Byzantine, and European art from the ninth to the twentieth centuries. The principal aim of the dissertation is to examine the image of Saint Gregory the Illuminator not within the confines of a single artistic milieu or artistic medium, but as a figure characterized by a long and continuous iconographic evolution, whose various stages and manifestations were shaped by historical, confessional, political, and artistic realities. To achieve this aim, the following objectives were established:

- to identify, collect, and introduce into scholarly circulation the largest possible number of artistic representations of Saint Gregory the Illuminator from diverse geographical, cultural, and confessional contexts;

- to study the collected material and, whenever possible, clarify the dating, authorship, place of production, and historical-cultural environment of the artworks, since a considerable number of these monuments have survived without dates or authorial attributions;

- to systematically examine and compare Armenian and especially foreign-language scholarly literature related to the subject, integrating it into a unified academic framework;

- to reveal the multilayered nature of the iconography of Saint Gregory the Illuminator, its historical, confessional, and artistic foundations, as well as the iconographic transformations and developments that emerged in different periods;

- to identify the regional and stylistic characteristics of images created in various areas while considering their relationship to common iconographic prototypes and the broader Christian artistic tradition;

- to investigate the interactions between Armenian and European art within the framework of the iconography of Saint Gregory the Illuminator and to demonstrate the distinctive features of the dissemination and reception of his image in different cultural environments.

The dissertation consists of an introduction, three chapters, conclusions, a bibliography, a list of illustrations, and an appendix containing visual material.

The research has led to the following conclusions:

- The iconographic tradition of Saint Gregory the Illuminator was formed and developed through a long and multifaceted process that incorporated Byzantine, Armenian, and later European artistic tendencies. In its earliest phase, Gregory emerged as a universal Christian saint included among the Fathers of the Orthodox Church and acquired a stable canonical iconographic type characterized by a frontal standing figure, a gesture of blessing, and the Gospel in his hands. Originating in Byzantine art, particularly within the mosaic

programme of Hagia Sophia, this type subsequently spread throughout the Orthodox world and became the principal form of his representation.

- In different cultural settings, the iconography of Saint Gregory underwent local reinterpretations. In Byzantine and post-Byzantine art, his image retained its canonical character and emphasized his status as a Church Father, whereas in Russian icon painting it was occasionally associated with biblical prototypes. In Armenian manuscript illumination, however, it experienced a particularly diverse and dynamic development.

- The monastic complex of San Gregorio Armeno in Naples constitutes an exceptional phenomenon in both Armenian and Italian art owing to the scale, artistic quality, and ideological richness of its cycle dedicated to Saint Gregory the Illuminator. The frescoes executed by Luca Giordano and other masters, combining hagiographical tradition with the artistic language of the Baroque, present a comprehensive visual narrative of the saint's life and miraculous deeds.

- The cult of Saint Gregory the Illuminator was not confined to Naples but was widely disseminated throughout Southern Italy. Alongside Naples, important centres of his veneration included Nardò and Bari, where medieval churches and artworks dedicated to the saint have survived to the present day.

- The principal iconographic type of single-sheet engravings depicting the torments of Saint Gregory was established on the basis of the compositions of Lucas Chambellanus. Closely following the Agathangelos tradition and distinguished by their detailed narrative structure, these engravings rapidly acquired a canonical status and were reproduced for centuries in Armenian communities across the world.

- In Catholic contexts they frequently promoted the idea of Armenian–Roman ecclesiastical union, whereas within the Armenian Apostolic tradition they primarily functioned to glorify Saint Gregory, invoke his intercession, and present his life and sanctity in an accessible visual form. Owing to their portability, affordability, and wide circulation, these engravings spread extensively, although for the same reasons they have often survived only in isolated or damaged examples.

- The iconography of Saint Gregory occupied a particularly significant place in Armenian book art. His image was considered so important in early printed books that engravings originally created for other European saints were sometimes adapted for his representation, while in other instances entirely new compositions were specifically commissioned and engraved for him.

- The Armenian icons of Moldavia and Transylvania from the seventeenth to the nineteenth centuries, while preserving themes connected with Armenian saints, national ecclesiastical traditions, and Armenian spiritual identity, constitute a distinctive manifestation of Armenian icon painting.

- The activity of the first printing house of Holy Etchmiadzin in the eighteenth century not only marked the beginning of printing in Armenia but also contributed to the formation of an independent iconographic language in Armenian printed art. Its engravings

combined the traditions of medieval manuscript illumination, national ecclesiastical symbolism, and contemporary artistic tendencies. The Etchmiadzin printing house became the cultural environment in which the manuscript tradition continued in the new medium of print, laying the foundations for the subsequent development of Armenian iconography and book art.

- In medieval Christian art, the principal intercessors in representations of the Virgin and Child were usually John the Baptist and Saint Stephen the Protomartyr. In Armenian art, however, this group was expanded to include Saint Gregory the Illuminator, who was portrayed as the perpetual heavenly protector and intercessor of the Armenian people. Originating in medieval manuscript illumination, this iconographic type became especially widespread in Armenian icon painting and engraving during the seventeenth and eighteenth centuries.

- The legend of the “Letter of Love and Concord” became an important ideological foundation in medieval Armenian and European culture through which Armenian–Roman ecclesiastical and political relations were interpreted in different ways. European art tended to emphasize the primacy of Rome, whereas Armenian representations highlighted the spiritual equality and fraternal unity of the two Churches and their leaders. Consequently, this theme retained its political, confessional, and artistic relevance for centuries.

- The iconography of Saint Gregory the Illuminator developed across different historical periods and cultural environments as a dynamic and multilayered system that preserved its fundamental theological and ideological core while continuously adapting to new artistic, political, and ecclesiastical contexts.

